



Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲԼԱՅԻ

Շաբաթ, 16 Դեկտեմբերին, Ս. Յակոբ Մծբլացի Հայրապետին տօնն է: Ան ծնած ու մահացած է Մծբին քաղաքը: Մծբին քրիստոնեական կարեւոր կեդրոն մըն էր Փոքր Ասիոյ մէջ եւ դէպի արեւելք ու արեւմուտք ուղղուող կարաւաններու հանգրուան մը:

Ս. Յակոբ Մծբինի եպիսկոպոս ձեռնադրուած է 320 թուականին: Մասնակցած է Նիկիոյ Տիեզերական առաջին ժողովին (325), ուր մեծ յարգանքի արժանացած է Կոստանդին կայսեր եւ միւս մասնակիցներուն կողմէ:

Յակոբ Մծբլացի Հայց. Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն մէկն է:

Ս. Յակոբ փորձած է Նոյեան տապանը գտնել: Վերելքի երրորդ օրը, հրեշտակ մը երեւցած ու յայտնած է իրեն, թէ գազաթը մագլցելու պէտք չունի, ու իրեն յանձնած՝ տապանի մասունք մը, որ կը պահպանուի մինչեւ օրս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ:


Ս. Յակոբ իր գրիչով գրուած շատ մը աստուածաբանական ճառեր եւ յօդուածներ փոխանցած է հաւատացեալ ժողովուրդին: Ան իր հոգին Աստուծոյ յանձնած է շուրջ 347 թուականին:

Հետեւաբար, սիրելի՛ փոքրիկներ, թող Ս. Յակոբի տօնը առիթ մը ըլլայ բոլորիս միշտ աղօթելու եւ ծառայութեան ոգիով լիցքաւորուելու:

Շնորհաւոր Ս. Յակոբ Մծբլացի Հայրապետին տօնը: Շնորհաւոր Յակոբ անունը կրող բոլոր մեր ԿԿՈՒի հետեւողներուն տօնը:



ԹԻՒ ԴԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔՇՇՈՇԵԱՆ



Ձիւնեմարդը իր քթիկը կորսնցուցած է: Կրնա՞ս գտնել զայն:



Կրնա՞ս լուծել:

$$\begin{array}{r} 39 \\ + 12 \\ \hline \end{array}$$



$$\begin{array}{r} 40 \\ + 35 \\ \hline \end{array}$$



$$\begin{array}{r} 53 \\ + 44 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} 34 \\ + 10 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} 57 \\ + 37 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} 72 \\ + 6 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} 43 \\ + 39 \\ \hline \end{array}$$



$$\begin{array}{r} 78 \\ + 19 \\ \hline \end{array}$$



$$\begin{array}{r} 91 \\ + 6 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} 52 \\ + 16 \\ \hline \end{array}$$



$$\begin{array}{r} 63 \\ + 14 \\ \hline \end{array}$$



$$\begin{array}{r} 88 \\ + 5 \\ \hline \end{array}$$

ԵՎԷՔ ՄԻԱՍԻՆ ԽԱՂԱՆՔ Հոտերու յիշողութեան խաղը

Հոտառութիւնդ զօրաւոր է: Կրնա՞ս տարբեր հոտեր իրարմէ զանազանել: Ահա հետաքրքրական խաղ մը, որ կրնաս անձամբ պատրաստել եւ ընկերներուդ հետ խաղալ:

Պէտք ունիս (2-4 խաղացողներու համար) կերպընկալէ (բլաշիք) 16 (ոչ թափանցիկ) գաւաթի, խոհանոցի թուղթ թաշկինակի, կաշուն երիզի, 2 հատ պանակի, թարմ անանուխի 2 ցօղունի, հուսամի (լաւանտա) 2 ցօղունի, զօրաւոր հոտ ունեցող 2 կտոր պանիրի, 2 սուրճի դգալ աղացուած սուրճի, ծոթրիկի 2 ցօղունի, ռեհանի 2 ցօղունի, 2 սուրճի դգալ փոշի կասիայի եւ ասեղի մը:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1.- Գաւաթներուն մէջ զոյգ-զոյգ դի՛ր բոլոր նիւթերը:
- 2.- Թուղթ թաշկինակի կտորով մը գաւաթները ծածկէ՛ եւ կաշուն երիզի կտորներով ամրացո՛ւր զանոնք:
- 3.- Ասեղով ծակծկէ՛ թուղթ թաշկինակը:
- 4.- Իւրաքանչիւր գաւաթի տակ գրէ՛ անոր մէջ գտնուող նիւթին անունը:

ԻՆՉՊԷՍ ԽԱՂԱԼ

Այս խաղը կը խաղցուի յիշողութեան խաղին նման: Պէտք է գտնել նոյն պարունակութիւնը ունեցող երկու գաւաթները՝ հոտառութիւնը օգտագործելով: Կը յաղթէ այն անձը, որ ամենէն շատ զոյգ գաւաթներ կը շահի:

Կրնա՞ս 8 տարբերութիւններ գտնել երկու պատկերներուն միջեւ:



ԱՐՄԵՏԻՆ ՈՒՂՏԸ

Աւետիք Իսահակեան



- Ո՛վ մարդ, ուղտս կորսուեր է. արդեօք հոսկէ չէ՞ անցեր, չտեսա՞ր գայն.
 այսպիսի ուղտ մը,- ըսաւ Ահմէտ:
 - Դող դարձաւ երեխաներուս ապրուստը,- նեղսրտելով ըսաւ մարդը,-
 ասե՛ղս կորսնցուցեր եմ, ասե՛ղս, որով պիտի կարեմ պարկս եւ տուն երթամ: Քու
 ո՛ւղտդ աչքիս կ'երեւի: Եկո՛ւր, նախ ասեղս փնտռենք եւ յետոյ՝ քու ուղտդ:

- Խենթ ես այս մարդիկը,- մրթմրթաց Ահմէտ ու
 ելաւ գնաց: Ան որուն դիմեր, նոյն պատասխանը
 կը ստանար:

- Ի՞նչ է, բան ու գործ չունինք, քու ուղտիդ պահապա՛ն
 պիտի ըլլանք:

Ահմէտ մարդոցմէ վշտացած եւ յոյսը կտրած գիւղ
 վերադարձաւ: Ան նստաւ ծառի մը տակ, գլուխը ափերուն
 մէջ առաւ ու տրտում, տխուր մտածեց: Քունը վրայ
 հասաւ, եւ Ահմէտ յոգնաբեկ գոցեց իր աչքերը: Քնանալն ու երազ
 տեսնելը մէկ եղաւ: Երազին մէջ իր մայրը եկաւ, շոյեց իր գլուխը եւ ըսաւ.

- Որդի՛ս, մի՛ տխրիր, ուղտդ կորսուած չէ: Այսպէս է աշխարհիս օրէնքը.
 նախ պետք է փնտռես ուրիշին կորուստը, որպէսզի ուրիշն ալ փնտռէ քու
 կորուստդ: Մի՛ մեղադրեր մարդիկը: Իւրաքանչիւրին աչքին իր աքլորն ու
 ասեղը քու ուղտիդ չափ մեծ են:

Ահմէտ արթնցաւ ու վազեց դէպի պառաւը:

- Մամի՛կ, աքլորդ գտա՞ր,- հարցուց ան:

- Չէ՛, որդի՛ս, չէ՛:


- Եկո՛ւր, միասին փնտռենք:

Երկուքը մէկ ինկան գիւղին երդիքներն ու կալերը: Մինչեւ ուշ
 իրիկուն կորսուած աքլորը փնտռեցին: Յանկարծ պառաւը խելացնոր
 գոչեց.

- Ահա՛ կտրիճ աքլորս. պատին տակ նստած է:

Ահմէտ վազեց դէպի աքլորը. աքլորը վախցած եւ թելերը
 թափահարելով վազեց դէպի դաշտերը: Ահմէտ ետեւէն, աքլորը
 առջեւէն, վազեցին ու վազեցին... Ու ահա, ո՛վ հրաշք, իր աչքին
 առջեւ ելաւ ուղտը, ճիշդ իր ուղտը, որ մարզին մէջ նստած
 հանգիստ մը կ'որոճար: Ահմէտի ուրախութեան չափ չկար:
 Ան իսկոյն նստաւ իր ուղտին վրայ եւ մէկ ձեռքին մէջ աքլորը,
 միւսին մէջ՝ ասեղը գիւղ մտաւ:

(Շարունակելի)



ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԻՆՉՈ՞ՒՄ ԱՐԻՒՆՍ ԿԱՊՈՅՑ Կ'ԵՐԵՒԻ ՁԵՌՔԻՍ ԵՒ ԴԱՍՏԱԿԻՍ ՄԱՇԿԻՆ ՏԱԿ:

Այն արինը, որ կը տեսնես ձեռքերուդ եւ դաստակներուդ մաշկին տակի բարակ երակներուն մէջ, նոյն արինն է, որ դէպի սիրտդ եւ թոքերդ կ'երթայ՝ մաքուր օդ ստանալու:

Այն արինը որուն մէջ մաքուր օդ չկայ, կապոյտի թեթեւ երանգ մը կ'ունենայ: Մաքուր օդ ունեցող արինին գոյնը կարմիր կ'ըլլայ: Անոր համար ալ շրթունքներդ եւ այտերդ վարդագոյն կ'ըլլան:



ԻՆՉՈ՞ՒՄ ՓՈՔՐ ՊԱՏՈՒԱԾՔ ՄԸ ՇՈՒՏՈՎ ԿԸ ԴԱԴՐԻ ԱՐԻՒՆԱՅՈՍՈՒԹԵՆԷ:

Արեանդ մէջ յատուկ մասնիկներ բուժումի շատ կարելոր պաշտօն ունին: Մաշկիդ վրայ երբ փոքր պատռուածք մը սկսի արիւնիլ, արեան մասնիկները միասնաբար գործի կը լծուին եւ վերջին վրայ խաւ մը կը շինեն, որ կը դադրեցնէ արիւնահոսութիւնը:

Խաւը կը կազմուի թանձրացող արիւնէն: Խաւը կը չորնայ մորթիդ վրայ եւ կեղեւ կը շինէ: Մի' փոքրեր գայն, որովհետեւ արիւնահոսութիւնը դարձեալ կրնայ սկսիլ: Պատռուածքը վիրակապով ծածկելը կ'օգնէ, որ վերջը շուտով դարմանուի եւ մանրէներէն հեռու մնայ: